

Միքելի մեծամորցիներ,
ջերմությամբ ու խորին հարգանքով համայնքի յուրաքանչյուր բնակչի հանդեպ,
շնորհավորում եմ բոլորիս Ամանորի և Սուրբ Ծննդյան առթիվ:

Յուրաքանչյուր տարին ամփոփելով՝ մենք վերլուծում ենք տարվա ձեռքբերումներն ու
բացթողումները և նախանշում դրանք լրացնելու պատրաստակամության ուղիները:

2022թ. չնայած արտաքին քաղաքական ուժեղ հակազդեցությանը, մեր երկիրը
կարողացավ դիմակայել: Եվ այդ պայմաններում, մեր համայնքում, պետք է փաստել
արձանագրված հաջողությունները ոգևորիչ են:

Անցած մեկ տարվա ընթացքում մենք հասցրել ենք, ոչ միայն իրականություն դարձնել
նախընտրական ծրագրով նախատեսված մի շարք խոստումներ, այլ նաև կյանքի
կոչվել պետություն-համայնք համագործակցության բազմաթիվ ձևաչափեր:

Գրեթե բոլոր բնակավայրերում կան իրականացված ակնառու աշխատանքներ: Իսկ
հաջորդ տարի դրանք կբազմապատկվեն:

Ամենօրյա այցելությունները, ինչպես իմ, այնպես էլ համայնքապետարանի
պատասխանատու աշխատակիցների, հնարավոր են դարձնում ապահովել
աշխատանքի նկատմամբ վերահսկողությունը, որն էլ իր հերթին ապահովում է
որակյալ և ժամանակին աշխատանքների ավարտը:

Որպես հիմնական ուղղություններ ընտրվել են մանկապարտեզները, մշակույթի
տները, խորքային հորերը, արտաքին լուսավորությունն, գազաֆիկացումը,
ասֆալտապատման աշխատանքները: Թվարկվածներին կավելանան նորերը,
սակայն արդեն 2023 թվականին: Այն խոշոր աշխատանքները, որոնք իրականացվում
են, հրապարակվում են մեր կայքում և սոցիալական հարթակներում:

Մեր թիմը եկել է աշխատելու ու մեր զավակներին թողնելու բարեկարգ,
արժանապատիվ ու ներկայանալի համայնք: Օր օրի մենք ականատես ենք լինելու
հիմնավոր աշխատանքի արդյունքների, յուրաքանչյուր բնակավայրում՝ համաչափ ու
մնայուն:

Միքելի մեծամորի բնակիչներ,

Շնորհավորելով տոների առթիվ՝ մաղթում եմ մեր ընտանիքներին ներդաշնակություն
ու ընտանեկան ջերմություն, մեր ծաղկուն ու օրինակելի միասնական համայնքին՝
բարգավաճում, իսկ մեր երկրին՝ խաղաղություն ու սահմաններին ապահովություն:
Թող մեր զինվորն ամուր կանգնած լինի սահմանին և անփորձանք ապահովի
Հայաստանում ապրող յուրաքանչյուր բնակչի արգասաբեր աշխատանքը:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ